

թեան վրայ, և որպէս զի նրանք տեսնեն թէ Շահը ինչքան իշխանութիւն ունի:

Մենք աւելացրինք թէ, երբեմն էլ սարսափ աղղելու համար, քաղաքի դռները, այդպիսի գէպերուս, դարդարում են ժարդկային մարմինների մեծ-մեծ մասերով, և գլխներն էլ զիգւում են արքայական պալատի առաջ:

Սակայն այստեղ մենք բոլորովին հակառակը տեսանք: Մեր անհաւատ կատապանները բշում էին ձիերը՝ աւելի սրարշաւ, քան թշնամու վրայ յարձակուող հեծկազօրքը, բան այն մարդիկ՝ որ տեղափոխում են երկրիս վրայ սպրող Ալլահի Ստուերի ներկայացուցչին:

Փաղաքին մօտենալով, շատ տեղերում պատերի վրայ սպիտակ տաւերով գրուածներ¹⁾ տեսանք, որոնք անշուշտ զրեւ էին մեր երկրի սովորութեան համեմատ և նոյն սուրբ նպատակով, ևս ընդօրինակեցի այդ մակագրութիւններից մի քանիսը և շատ խնամքով պահեցի, որպէսզի նրանց զործ անէի իմ խօսքերի մէջ, երբ որ հեշտութեամբ միտքս արտայայտելու համար անգլիերէն սովորէի:

Մեզ ասացին, որ միայն երեք փարսախ էր մնում մայրաքաղաք հասնելու. բայց ինչքան այդ հեռաւորութիւնը պակասում էր, այնքան աւելանում էր ճանապարհի ազմուկը:

Ամեն տեսակ կառքերով ման եկող ահագին քաղմութիւնից երևում էր, որ քաղաքի բնակիչները պիտի նախապէս լուր ստացած լինէին մեր ժամանման մասին, որովհետեւ ես լաւ յիշեցի, որ այն օրը, երբ Անգլիայի շահի վերջին զեապանը մօտ էր Սպահան հասնելու, բոլոր բնակիչներին հրամայուել էր դուրս գնալ զիմաւորելու նրան. ամենաշատ հետաքրքրուողներից մի քանիսը ժողովրդի գլուխն անցած՝ քաղաքից դուրս էին գնացել մինչև Հազար Դարէն²⁾ էլ զէնը զիմաւորելու նրան:

Բայց այնուամենայնիւ շատ զարժանալի էր որ պատշաճ կարգադրութիւն չէր արուել մեզ համար, որովհետեւ եթէ մեր արազընթացութեան ժամանակ մարդիկ մեզ տեսնում էին, նրանք կամ ծիծաղում կամ ծաղրական ձայն էին հանում:

Մենք լաւ հոգեխնդր մեր աչքերը և նայելիքը դէպի այն կողմը որ գնում էինք, երբ թանձր, զեղին գոլշիւների տակ տեսանք այն՝ ինչ անտարակոյս մի քաղաք էր: Դեռ պանը սկըսեց իր շուրջը նայել պատգամաւորներ տեսնելու յուսով:

1) Եւ Ալլի, հու, հակդ, եւ Ալլահ բառերը յաճախ ներկով գրուած են վնում պարսից մէջիղներին պատերի և մինչև անգամ աների պատերի վրայ:

2) Հազար ձոր:

Մենք զօրախմբեր չտեսանք, ոչ էլ մտահոգութեամբ այս ու այն կողմը քշող ձիաւորներ: Անգլիայի երկու միւրզաները անշարժ նստած էին, բայց մեհմանդարը, որ մեր երկիրը տեսած լինելով դուշակում էր թէ ինչ էր անցնում գեսպանի մօտով, ասաց թէ ինքն յոյս ունէր, որ մենք շուտով կը հասնէինք մեր ճանապարհորդութեան վախճանին և որ գեսպանը շուտով կը համոզուէր որ անգլիացի ազդը ցանկութիւն ունէր իր կայք երջանիկ դարձնելու:

— Եւ միթէ ձեր երկրի սովորութիւնն է, բացաքանչեց Միրզա Ֆիրուզը, մի գեսպանի այսպէս ծածկաբար մօցնել ձեր աթոռանիստը, որպէս թէ նա արգելուած ապրանքի մի հակ լինէր:

Գլխաւոր միւրզան մէհմանդարի միջոցով հաւատացրեց գեսպանին որ անգլիացիի սովորութիւնն չունեն պատգամաւորութիւն ուղարկել ընդ առաջ, ճանապարհի վրայ, բայց որ հէնց որ նա կը հասնէր իրան համար պատրաստուած տունը, նրան անշուշտ կը տրուէր իր բարձր աստիճանին վայել արժանի պատիւը:

— Եթէ այդ է ձեր սովորութիւնը, ասաց գեսպանը, Շահի գլուխը վկայ, հաւատացէք ինձ, որ շատ վատ սովորութիւն է: Դուք պնացէք Պարսկաստան և այնտեղ վարք սովորեցէք: Էսթէէզրայի սովորութիւնը Զէմշիդի ժամանակից շարունակուել է: Ախր մի տարբերութիւն պիտի լինի թէ ոչ, մի գեսպանի և մի պառաւ կնոջ գալստեան մէջ. թէ գուցէ ձեր կարծիքով, երկուսին էլ միևնոյնը պիտի լինի, քանի որ երկուսն էլ հաւասարաշախ ապաւորութիւն են թողնում, իհարկէ, ձեր աչքում:

Յետոյ դառնալով ինձ ասաց.

— Հաջի, հոգիս վկայ, եթէ այն ժամանակ, երբ Շահը մուրախտս արեց ինձ իր մօտից հեռանալու, ես գիտենայի, որ այսքան երկար ճանապարհորդութիւն պիտի անէի և հանդիպէի ծովի ալիքներին ու փոթորիկներին, ապրէի անհաւատների մէջ և խողանալով մարմինս ջրէի, կուլ տայի աւելի շատ աղտեղութիւն, քան երբ և իցէ մի ճշմարիտ հաւատացեալի վիճակուել է ուսել—այո, հաջի, եթէ ես գիտենայի այդ ամենը, ես կը դերձէի մօրուքս և ամբողջ կեանքումս մտնելով կը ծածկէի գլուխս և կը նստէի մի անկիւնում: Ա՛խ, անխ, Միրզա Շէֆի, միրզա Շէֆի, հառաչեց նա, այ դու պիղծ վէզիր, այս բոլորը քո արածն է: Եթէ մեռնելուցս առաջ չապականեմ քո և բոլոր նախահայրերիդ գեռերը (գերեզմանները) ուրեմն իմ անունս Միրզա Ֆիրուզ չէ:

Երկու անգլիացի միւրզաները լուռ ու տպւած մնացին գեսպանի այս խօսքերի վրայ, որ նա կրակուած արտասանեց: Նրանք հանդարտութեամբ իրանց մատով նրա ուշադրութիւնը

դարձրին մի գեղեցիկ պարտէզի վրայ, որի միջով անցնում էինք: Նրանք ասացին.

— Սա մեր հասարակաց ձեմելքներն են և զբօսավայրերից մէկն է:

— Փակեցէք լուսամուտները, գոռաց Միրզա Ֆիրուզը. «չ ոք չպիտի այսպէս անարգուած տեսնի ինձ: Ես՝ որին հրամայուած է Շահի երեսն սպիտակացել այս օտար երկրում, ես՝ որ առաջին դեսպանն եմ, որ Շահը ուղարկել է այստեղ, ես պիտի այնքան անուշադրութեամբ մատնուեմ, որքան Պարսկաստանում ցնցոտիների մի իշաբեռ: Սա անհանդուրժելի նախատինք, անարգանք է:

Մեր կառքը շարունակեց արագ թաւալուել յառաջ, և որովհետև պատուհանները փակուել էին, քրտինքով ծածկուեցինք: Բացի հանդարտ նստելուց՝ ուրիշ ոչինչ չէր կարելի անել:

Միրզաներն ու մէհմանդարը լուրջ կերպով խօսում էին իրար հետ: Մէհմանդարը որչափ կարող էր աշխատեց բացատրութիւններով հանգստացնել դեսպանին, բայց բոլոր խօսակցութիւններին վերջ տուեց մի նոր տեսակ աղմուկ, որ կառքը հանեց քաղաքի իսկ մէջը մտնելով:

Մեր աչքերի առաջից արագ-արագ անցնում էին փողոցներ, տներ, խանութներ և այնքան նոր-նոր անհամար բաներ, որոնք անկարելի է նկարագրել այստեղ: Մենք, վերջապէս, կանգ առինք մի դռան մօտ, որ ընկած էր միւսնոյն մեծութիւն ունեցող զանազան ուրիշ տների շարքում: Այստեղ մենք շատ ուրախացանք ու զարմացանք, երբ տեսանք մեր հայրենակիցներին, որոնք երեք օր առաջ մեզանից բաժանուել էին Պլիմութում, և որոնց, ճիշտն ասած, յոյս չուներինք կրկին տեսնելու:

Գլ. Ժը.

Անդոնի պարսիկների մասին:— Նրանք մի լորդի ընդունում են բժշկի տեղ:— Այն տան մասին, ուր նրանք հաստատուում են:

Բոլորովին դառնացած սրտով և փչացած տրամադրութեամբ՝ դեսպանը դուրս եկաւ կառքից առանց երբէք հետաքրքրուելու թէ արդեօք իջնելու համար ժամը յաջողակ կամ բախտաւոր էր, թէ չէ: Ո՛չ ոք չերևաց նրա առաջ որ նրան «խոշ ամէղիդ» ¹⁾ ասէր. «չ ոք չմօտեցաւ մի ընծայ ձեռքին ողջունելու նրա գալուստը. մի նուա անգամ չմատուցուեց նրան»:

¹⁾ Բարի էք եկել:

Մաստիկ գրգռուած՝ նա արագութեամբ բարձրացաւ սանդուղքը և յուսահատութեամբ ընկաւ մի բազմոցի վրայ:

Նա հրաւիրուեց վայելել իր համար նախապէս պատրաստուած փառաւոր ճաշից, որ բազկացած էր համադամ կերակուրներից, մրգեղենից և պաղպաղակներից. սակայն, ի զոր, նա չմտեցաւ նրանց: Երկու անգլիացի միրզաները և մեհմանդարը նրան հաւաստիացրին որ, այդ սեղանը պատրաստուել էր կառավարութեան յատուկ պատուէրի համաձայն, սակայն դարձեալ ի զոր. *հչինչ* խօսք-չկարողացաւ մխիթարել նրան: Նա երդուեց որ ինքը սե-երես է եղել և որ այդպէս սե-երես էլ պիտի մնար: Մէհմանդարը յետոյ մի ափսէով կերակուր մատուցեց նրան և խնդրեց ուտել:

— Ուտե՛մ, ասաց դեսպանը, ուտե՛մ. եթէ ձեր բոլոր ընդունելութիւնները այս եղանակով են կատարուում, և եթէ դուք կարծում էք թէ ինձ մի բան ուտացնելով կարող կը լինէք սրբել, բառնալ այն անպատուութիւնը, այն անարգանքը որ իմ Շահը այսօր կրել է՝ սխալւում էք, բոլորովին սխալւում էք: Թող ձեր Շահի կողմից որ և է մէկը գայ այստեղ, ողջունի իմ գալուստը, յետոյ ես թերեւ մի բան կուտեմ. բայց մինչև այդ՝, այդ մինչև մէկը ձեր թագաւորի կողմից ինձ «խոշ ամէ-դիդ» չասի, ես օրինաւոր չեմ համարիլ որ և է բանի համը տեսնել:

Բայց միթէ դուք անգլիացի երկու միրզաներին *հչինչ* չէք համարում, *հչինչ* բանի տեղ չէք դնում, հարցրեց մէհմանդարը:

— Միրզաներ, իսկապէս, բացազանչեց Միրզա Ֆիրուզը կատաղած: Միթէ մենք միայն՝ մի ֆէրման գրող կամ մի հասարակ միրզա ուղարկեցինք դիմաւորելու ձեր դեսպանին: Այդ ի՞նչ խօսքեր են. այլ ևս այդպիսի անօգուտ խօսքեր մի ասէք: Սե՛ է, իմ երեսը, սե՛ է ձեր երեսը, և ինչպիսի պիտի սե-ւանայ և՛ ձեր կառավարութեան երեսը, երբ այս եղելութիւնը տարածուի աշխարհում:

Տեսնելով որ նրա այդ վատ տրամադրութեան ժամանակ *հչինչ* չէր կարելի անել նրան, մենք թոյլ տուինք որ նա թաւալուէր բազմոցի վրայ: Սէիդն սկսեց շփել և տրորել նրա ոտները և Ֆէրէյդունն էլ ճմուելով նրա մէջքն ու ազդրերը կարողացաւ աւելի լաւ հանգստացնել նրան, քան կարող էին երկու միրզաների կամ մէհմանդարի խօսքերը:

Ես էլ վերջին ժամուայ ընթացքում կրածս թշուառութիւններից ազատուելու և մի քիչ մխիթարուելու համար, գնացի իմ հայրենակիցների մօտ: Նրանք ընակուել էին տան մուտքի մօտ

գտնուող մի մեծ սենեակում, որի մէկ ծայրին առաստաղին կպած՝ կանգնած էին երկու սիւներ, և որի շուրջը շարուած էին աթոռներ ու մէջտեղն էլ չորս ոտների վրայ դրուած էր մի փայտէ մեծ սնտուկ։¹⁾

Այս սենեակում փռել էին իրանց կարպետները, տեղաւորել էին ձիերի թամբերն ու խուրջիները, պատերից կախել էին իրանց հրացանները, սրերը և ատրճառակները, և արել էին այն բոլոր կարգադրութիւնները, որ սովորաբար անում են քարվանսարաններում։

Անվերջ էին այն բոլոր բաները, որոնք մենք պիտի պատմէինք միմեանց։ Նրանք ճանապարհորդել էին երկրի միջից այնպիսի մի ձևով՝ որ վայել ու արժան է թագաւորներին, որովհետև նրանք ամեն յարմարութիւն ունեցել էին կառքերում։ Ամեն կայարանում ձիերը նրանց համար լծուած պատրաստ էին եղել, աւելի մեծ արագութեամբ տանելու նրանց։ Ո՛չ մի անգամ չէին հարկադրուել սուր կամ հրացան դրոժ ածելու, որովհետև շատ քիչ ու թեթև արգելքների էին հանդիպել։

Ընդհատ է, նրանք ճանապարհին ոչ մի տեղ կանգ չէին առել, ամեն տեղ նրանց պարտաւորացրել էին—կամայ ակամայ ճանապարհը շարունակել, որովհետև անողորքելի կառավարութիւնը նրանց երբէք ժամանակ չէր շնորհել մի դայլան պատրաստելու, բայց և այնպէս նրանք շատ ուրախ էին եղել ճանապարհին, որովհետև ճանապարհորդել էին որպէս աղաներ, և մարդիկ էլ ամեն տեղ ստրուկների պէս ծառայել էին նրանց։ Մի խօսքով, նրանք այնքան ուրախ ու երջանիկ էին եղել, որ իրանց ասելով, ամենակին չէին նեղանալ, չէին տխրիլ, եթէ իրանց ճանապարհորդութիւնը դեռ վերջացած էլ չլինէր։

Երբ նրանք հասել էին Լոնդոն և իջել էին իրանց համար արդէն պատրաստուած այդ տանը, նրանք այնտեղ այնքան շատ սենեակներ էին գտել որ զարմացել, շքմել էին և չէին կարողացել որոշել թէ ո՞ր մէկումը բնակուեն. բայց որովհետև նրանք փորձով գիտէին, թէ շատ աւելի լաւ և աւելի ապահով կը լինէր եթէ միասին բնակուէին և քնէին միմեանց հըսկողութեան ու պաշտպանութեան ներքոյ, ուստի՝ վերջնականապէս որոշել էին ապրել այնտեղ, այն սենեակում, որտեղ ես գտայ նրանց։ Նրանք մտածել էին որ աւելի լաւ կը լինէր այդտեղ, վերնայարկում, միասին բնակուել քան առանձին սենեակներում։

Ամեն առաւօտ նրանց այցելել էր մի անհաւատ ծերու-

1) Երեւի սեղան է նշանակում։

նի, որը նրանց կարծիքով բժիշկ էր: Նա շատ բարի էր եղել դէպի խոհարարը, որը ճանապարհի յոգնածութիւնից վատաւորվ էր: Նա բարեսիրտաբար շօշափել էր նրա զարկերակը և իր օգնականին ուղարկել էր հարկաւոր եղած դեղը մատակարարելու նրան:

Մենք հիացմունքով խօսում էինք ֆրանկ բժիշկների մասին, երբ յիշեալ ծերունին ու մէհմանդարը ներս մտան: Մենք ամենքս էլ յառաջ-վազեցինք որպէս զի նա շօշափէր մեր զարկերակը և տեսնէր մեր լեզուն, որովհետև ֆրանկները լեզուին նայելով ու զարկերակը շօշափելով է, որ կարողանում են ստուգել թէ մարդը հիւմնո՞ւ է, թէ առողջ, Բայց մենք շատ զարմացանք, երբ տեսանք որ մէհմանդարը սկսեց քահ-քահ ծիծաղել մեր արարքի վրայ:

—Տօ ի՞նչ խաբար է, ասաց նա: Դուք ինչո՞ւ էք այդպէս անում:

—Նա մեր բժիշկն է, ասացինք մենք, նա, փառք Ալլահին, բժշկել է մեր սրտացաւը:

—Ի՞նչ, բժիշկ, բացականչեց նա: Օ՛, նա բժիշկ չէ. նա հօրեղբայրս է:

—Լաւ, ասացի ես, ասինք թէ նա ձեր հօրեղբայրն է. բայց նա կարող է միևնոյն ժամանակ և՛ բժիշկ լինել և ձեր հօրեղբայրը. ի՞նչ ֆլասա:

—Բայց նա օմէրաններից մէկն է, նա լորդ է, նա սրի տէր է ¹⁾, նա երբէք իր կեանքում զեղ չէ պատրաստել:

—Մենք ի՞նչպէս իմանանք այդ, ասաց խոհարարը. մենք ի՞նչպէս իմանանք թէ ձեր մէջ ձրն է լորդը և ձրն է բժիշկը. ախր ինչո՞վ զանազանենք նրանց:

—Մէհմանդարը շփոթուեց, չգիտէր ի՞նչ պատասխանել, որովհետև իսկապէս այս տարօրինակ երկրում բոլոր մարդիկը հաւասար են երևում, արտաքինով չեն զանազանւում:

Մարդուն իր զգեստից ճանաչելն անկարելի էր այստեղ: Անշուշտ արտաքին շուքն ու զարդարանքը չէր այստեղի նշանը, որով մարդ կարողանար ճանաչել թէ այս ի՞նչ մարդը ի՞նչ պաշտօնի, ի՞նչ աստիճանի տէր է, որովհետև եթէ այդպէս լիւնէր՝ կառապանները պիտի այդ երկրի ազնուականները համարուէին, քանի որ ամենագեղեցիկ զգեստ հազնոյ մարդիկն էին որ մենք տեսանք:

Այլապատելով եղրակացութիւններ հանել մեր տեսած բոլոր բաներից, մենք տեսանք որ մեր զօրաւորութիւնները աւելի

¹⁾ Սրի տէր՝ այսինքն զինուորական:

բաղմանում են. ուստի ամենալաւ բանն՝ այն համարեցինք, որ դեռ նստենք համբերութեան բլրի վրայ և սքանչանանք մեր աչքին նորութիւն երևացող ամեն մի բանի վրայ՝ մինչև մեր մտքերն ու գաղափարները աւելի լայնանային:

Միևնոյն ժամանակ, մէհմանդարի ընկերակցութեամբ ես շրջեցի ամբողջ տան մէջ և լաւ թամաշա արիւ. Երևում էր որ անգլիական Շահի կողմից մեզ յատկացրուած այդ տունը վերջերս բռնի կերպով առնուել էր մի խանից, որովհետև չէինք կարողանում հաւատալ որ, որևէ մէկը իր յօժար կամքով ձեռք քաշած լինէր այդքան ահագին, մեծարժէք ստացուածքից և յանձնած լինէր օտարականներին:

Արքունի ծերունի պանծապահը, որ Թէհրանում պարտաւորուել էր իր սեփական տունը յանձնել վերջին ֆրանկ դեսպանին, աւելի լաւ էր հասկացել իր անելիքը, որովհետև նա վերցրել էր իր պատուական գորգերն ու թաղիքները, իր բոլոր մետաքսէ վարագոյրները, իր բոլոր չինական գաւաթները և արծաթէ մոմակալները և նրանց տեղը թողել էր հին, մաշուած իրեղեններ, որ վերջապէս նոյն նպատակին էին ծառայել ինչպէս նորերը:

Բայց այստեղ. այստեղ թանկագին ու պատուական իրերի վերջ չկար: Պատերի դէմ դրուած էին այնպիսի մեծ-մեծ հայելիներ, որոնց նմանը դեռ երբէք չէր բերուել Պարսկաստան: Այսպիսի մոմակալներ ու ջահեր կային, որոնց նմանը միայն Շահը ունի իր Նիզարիատանի պալատում: Կային նաև շատ կարպետներ, բաղմոցներ, աթոռներ, մահճակալներ և վերջապէս ամեն բան՝ որ ֆրանկները պէտք ունեն իրանց կեանքի համար—բաներ՝ որ մենք չէինք կարողանում հասկանալ թէ ի՞նչի համար են, բաներ՝ որ երբ մեզ ասուեց թէ ի՞նչի համար են, մեզ բոլորովին անհասկանալի ու անպէտք երևաց:

Օրինակի համար, այստեղ կային զանազան ձևի աթոռներ, որոնց մի քանիսը այնպէս էին, որ նրանց վրայ նստողի ոտները բարձր պահէին, մի քանիսը ցած, մի քանիսը այնպէս էին, որ մարդ նստած ժամանակ կարողանար ձախ թևի վրայ թեք ընկնել, մի քանիսը՝ աջ թևի վրայ յենուելու համար, և մի քանիսն էլ գլուխը բարձր պահելու համար:

Արդ, այդ բոլոր բաները բոլորովին ունայն, անպէտք բաներ էին երևում մեզ, մեզ՝ որ սովոր էինք միմիայն մէկ ձևով նստել, այսինքն կրունկների վրայ:

Բացի այդ բոլորից, կային նաև առանձին սեղաններ ճաշելու համար, առանձին սեղաններ գրելու համար, սեղաններ՝ լուացուելու և սափրուելու համար:

Բայց միթէ կը վերջանայ, եթէ ես փորձեմ նկարագրել ամենը, ամենը: Սենեակներն էլ տարբեր նպատակների էին ծառայում, և այն մէկը, որտեղ բնակուում էին ծառաները, յատկացւում էր ճաշելու համար:

Այստեղ, ամեն մի ուրիշ սենեակում ճաշելը անկարգ բան է համարւում, ամեն մի ուրիշ սենեակում կամ տեղում քնելը սրբապղծութիւն է համարւում, և ամեն մի ուրիշ տեղում լողանալը ապստամբութիւն է յարուցանում:

Յետոյ կային զանազան մեծ սենեակներ, որոնց անկիւններում դրուած էին զանազան մահճակալներ ¹⁾: Այդ սենեակների մէկի մէջ մենք բոլորս միասին կարող էինք քնել շատ հանգիստ կերպով, բայց մեզ ասուեց, որ դրանք Ֆրանկների դիւանատներն են, ուր աղաներն ընդունում են իրանց այցելուներին:

Մէկ բան ամենից հաստատ է. այն՝ որ նրանք անդէրուն (կանանց բաժին) չունին: Կանանց համար առանձին սենեակներ չեն պահւում: Մարդիկ ու կանայք բոլորը միասին են ապրում: Կարող է մի տղամարդի սենեակը կից լինել մի կնոջ սենեակին, բայց դրա մէջ ոչինչ ֆլասակար բան չկայ:

Թէ այդ ձևով ի՞նչպէս ապրել կը լինէր՝ մենք դեռ պիտի իմանայինք: Դիտարանք մնացել էր շուարած. նա չէր հասկանում թէ որտեղ տեղաւորէր չէրքէզուհուն. այսպէս տատանւում էր մինչև վերջը, երբ մենք դռանք մի լաւ սենեակ որ անջատուած էր միւսներից և ուր կարող էր ապրել նա առանց մէկից տեսնուելու և առանց մէկին տեսնելու: Այդ սենեակում նա երջանիկ կը լինէր, ապրելով մեր սովորութեան համեմատ:

Անհաւատների կանանց՝ առանց քողի տղամարդկանց առաջ երևալը՝ տակաւին մեզ համար ամենամեծ զարմանքի նիւթ էր: Նրբեմն մենք տեսնում էինք՝ կանանց որոնք կանաչ, սև կամ սպիտակ կտորով իրր թէ ծածկել էին իրանց երեսները, բայց յետոյ մեզ յայտնուեց, որ դա միայն քամուց, փոշուց կամ արևից պաշտպանուելու համար էր և ոչ երբէք մարդկանց անմաքուր աչքից, հայեացքից ազատ մնալու համար:

Ինչ և է. քանի որ ես սրանից յետոյ դեռ շատ բաներ կ'ունենամ պատմելու այս նիւթի, ինչպէս և այս անհաւատ խոզակեր ժողովրդի երկու սեռի իրար հետ ունեցած յարաբերութեան մասին, ևս առ այժմ կը սահմանափակուեմ և միայն կ'ասեմ, որ մեր ժամանման առաջին օրը ամբողջ ժամանակ ոչինչ չարեցինք, միայն թէ քննեցինք մեր բնակարանի մէջ գտնուող բոլոր հետաքրքրաշարժ բաները:

1) Բազմոց է նշանակում:

Մենք շարունակ պարտաւորուում էինք ներքնայարկից վերնայարկ բարձրանալ ու ցած դալ: Աստիճանները աւելի երկար էին քան Սպահանի ամենաբարձր մինարէթինը: Մենք ամեն օր այնքան վերև էինք գնում ու ցած գալիս, որ վերջը սաստիկ ձանձրացանք, յոգնեցինք ու վճռեցինք այլևս չհագնել մեր բարձրակրունկ կօշիկները, որ յաճախ սահում էին վար իջնելիս: Այո, մենք որոշեցինք մի կողմ դնել մեր բարձրակրունկ ու երկաթէ պայտերով ոտնամանները և հագնել տափակակրունկ կօշիկներ, որպիսին հագնում էին ֆրանկները:

Մենք լաւ էինք յիշում մեր պարսկական տների յարմարութիւնները, երբ համեմատում էինք նրանց այս մէկի հետ որտեղ մենք բնակւում էինք: Այնտեղ՝ Պարսկաստանում մենք սահողութի մէկ աստիճան անդամ բարձրանալու կարիք չուենք: Մեր տները բոլորը մի յարկանի են: Գետնի նոյն մակերևոյթի վրայ են շինուած մեր հարեմը իր յիսուն սենեակներով և իր խառն անցքերով, ընդարձակ դիվանխանան, լայն բակը, որ զարդարուած է ծառերով, ծաղիկներով և թարմանում է ցայտող շատրուաններով:

Այստեղ, ընդհակառակը ամեն բան վայր ի վերոյ է: Միս եփելու համար մենք պիտի իջնէինք մինչև երկրի խորքերը և ուտելու համար պիտի խորքից դուրս գայինք գետնի երեսը: Թէ նստելու և թէ հանգստանալու համար՝ մենք պէտք է թըռչունի պէս մէջտեղում թառէինք և քնելու համար՝ պիտի բարձրանայինք օդակառոյց սենեակների մէջ:

Մոհամէդ-բէգը—մեր խմբի Լոդմանը, որ շարունակ աշխատում էր իր տեսած բոլոր բաների պատճառները գտնել, այն կարծիքին էր որ, Անգլիան մի կղզի լինելով՝ հարկաւոր էր այնտեղ գետնի խնայողութիւն անել, որովհետև եթէ բոլոր տները առանձին-առանձին շինուէին ու տարածուէին այդ կըղզու մակերևոյթի վրայ՝ ինչպէս Պարսկաստանում, այն ժամանակ այդ ամբողջ կղզին միայն մէկ քաղաք կը դառնար և տեղ չէր մնալ հողագործութեան համար: Նա ասում էր թէ, որովհետև Պարսկաստանը մի երկիր է որի սահմանները յայտնի չեն, փոյթ չէր թէ նրա մակերևոյթի ճրքանը ծածկուել էր և դեռ պիտի ծածկուէր շինութիւններով, որքան էլ որ շինութիւնները շատ լինէին այնուամենայնիւ միշտ շատ, շատ գետին կը մնար:

Մոհամէդ-բէգի այս նկատողութիւնը հաստատուում է այն յայտնի հանգամանքով, որ Պարսկաստանում ամեն մարդ պարտք է համարում մի նոր տուն շինել իր համար, և իր հօր տունը թողնել որ աւերուի, այն ինչ Անգլիայում որդին ժառանգում է

իր հօր տունը և իրեն պարտաւոր է համարում միշտ նորոգել նրան, այնքան ընականաբար՝ ինչպէս Պարսկաստանում որդին ժառանգում է իր հօր մուշտակը և դուստրը՝ իր մօր վարտիքը, ու երկուսն էլ պարտք են համարում սիրել և պահել նրանց:

Գլ. ԺԹ.

Թէ նրանք ինչպէս են անցկացնում առաջին գիշերը Լոնդոնում—Անգլիացիների ծայները տարբեր են պարսիկների ծայներից:

Առաջին գիշերը մենք շատ վատ անցկացրինք: Մեզանից ամեն մէկը մի առանձին անկողին ունէր, անկողինների (մահճակալների) վարագոյրները այնքան գեղեցիկ էին, որ մենք ցանկանում էինք կտրել նրանց մեզ համար արխալուղ կարելու կամ մէջքներիս փաթաթելու համար: Մենք սովոր չէինք այդ անկողինների ծանր վերմակների տակ քնելու, և մի քիչ ժամանակ նրանց տակ քնելուց յետոյ, տեսանք որ մեր ղաբաւն ու վարտիքը շատ անհաճոյ կերպով նեղիչ դարձան:

Մենք բոլորս համաձայն էինք, որ այդ անկողինների մէջ փռուած սպիտակ քաթաններ պատուական շապիկներ կը դառնային: Թաղին (Ֆէրաշը) էլ որ միայն մէկ շապիկ ունէր, վճուեց անմիջապէս իւրացնել իր անկողնու սպիտակ սաւանը և աւելացնել իր շորերի վրայ:

Առաւօտը մենք բոլորս վաղ դարթնեցինք ու սկսեցինք շարժուել: Մոհամէդ-բէգը շատ շփոթուեց. նա չէր կարողանում ստուգել աղօթքի ճիշտ ժամը. ոչ մի մուէզզինի ձայն մէսջիդի կտուրից չէր յայտարարում այդ: Այստեղ գիշերը շատ երկար էր: Մեր երկրում այդքան երկար գիշեր մենք չէինք ունեցել: այնքան երկար էր գիշերը, որ մտածեցինք, որ այս թըշուառ քաղաքում գուցէ արեգակը երբեք չէ բարձրանում:

Զարթնելուց յետոյ, մի քանի ժամ շրջեցինք տան մէջ բոլորովին մթութեան մէջ, և յուսահատ սրտով սպասեցինք արեւածագին: Յանկարծ փողոցներից լսուեցին ձայներ, որոնք ցոյց տուին որ քաղաքի ընակիչները վարթնել են:

Ամբողջ գիշերը, որոշ ժամանակամիջոցներում լսել էինք ձայներ, որ մտածում էինք թէ անշուշտ գիշերապահների ձայներ են, որոնք մեր արքի¹⁾ պատերի վրայ հսկող քէշիքչիների²⁾ նման յայտարարում էին որ ամեն բան կար-

¹⁾ Պարսկաստանում Շահի պալատը «արք» է կոչւում:

²⁾ Հսկիչներ, գիշերապահներ:

զին է, ոչինչ չէ պատահել: Բայց այստեղի քէշիքչիներէ ձայ-
ները բոլորովին տարբեր էին:

Սկզբում մենք կարծեցինք թէ դրանք մուէզզիներ են, որ
նշանակուել են ֆրանկներին զարթնացնելու և աղօթքի հրա-
ւիրելու համար, և, յիշաւի, երբ արշալոյսին մենք կարողա-
ցանք տեսնել նրանց ¹⁾ մեր ենթադրութիւնը հաստատուեց ո-
րովհետեւ նրանք սև շորեր էին հագել ինչպէս հազնում են բո-
լոր անգլիացի կրօնաւորները: Բայց մենք, անշուշտ սխալուել
էինք, որովհետեւ թէպէտ նրանք զանազան սուր, բարձր ձայ-
ներ էին հանում, սակայն կարծես թէ ոչ ոք ուշադրութիւն
չգարձրեց նրանց, ոչ ոք կարծես թէ չուզեց մի րոպէ աւելի
կանուխ վեր ելնել իր անկողնուց, ոչ ոք կարծես թէ ամենևին
փոյթ չունէր աղօթելու համար:

Բայց դեռ մենք հաստատ չէինք, որովհետեւ երբ լաւ լու-
սացաւ, Մոհամէդ-բէգը վազելով ներս եկաւ և մեծ ուրախու-
թեամբ բացազանչեց — «մուէզզին, մուէզզին», և մատնացոյց
անելով մինարէներէից մէկի ծայրը, որ բոլոր տներէից տես-
նուում էր, այնտեղ տեսանք փողոցի կրօնաւորներէից մէ-
կին՝ որը իր բոլոր ուժով բարձրաձայն արտասանում էր իր
հաւատի դաւանանքը:

Երբ օրից բաւական անցաւ, մենք տարօրինակ ձայներ
լսեցինք, որոնց նմանը երբէք չէինք լսած մեր քաղաքներում:
Մենք լսեցինք նաև մի զանգի ձայն, որ ղօղանջում էր էջմի-
ածնի և Զուղայի հայոց եկեղեցիների զանգերի պէս: Այս
զանգի ձայնը մեզ կրկին ենթադրել տուեց թէ գուցէ այդ էր
ֆրանկներին աղօթքի հրաւիրելու իսկական ձևը: Սակայն
երևաց որ դա նշանաձայն էր բոլոր տներն ու տան դռները
մաքրելու: ²⁾

Այս բանը կանանց գործն էր, և մեզ թուաց թէ դա կապ
ունէր իրանց կրօնի հետ, որովհետեւ նրանք կատարում էին
այդ՝ որպէս ապաշխարանք՝ իրանց ծնկների վրայ, այսինքն
չոքած: Մեր տան մէջ էլ կատարուեց նոյն արարողութիւնը և
մենք մեծ զարմանքով իմացանք, որ այդ կանայքը, որոնց կա-
ռավարութիւնը նշանակել էր մեզ ծառայելու համար՝ մի և
նոյն յարկի տակ էին քնել մեզ հետ, այժմ էլ անում էին մեզ
համար այն՝ ինչ որ մեր ֆէրաշների գործն է:

¹⁾ Ծննելոյց մաքրողներ էին: Այդ ժամանակ փոքրիկ տղաքներ զին-
մաքրում ծխնելոյղները, բայց կառավարութիւնը վերջ տուեց այդ սովորու-
թեանը և յետոյ սկսեցին եղէգներով (բամբուկներով) մաքրել: Այդ տղաք-
ները փողոցներից անցնելիս բարձրաձայն գոչում էին «աւելի, աւելի»:

²⁾ Փոշի աւելողների զանգը, որ այժմ այլ ևս չի լսում:

Միրզա Ֆիրուզը իր սափրիչի օգնութեամբ թարմանալուց յետոյ, աւելի ուրախ տրամադրութեամբ դուրս եկաւ իր ննջարանից և մեզ յայտնեց որ ինքը մի երազ էր տեսել: Մոհամէդ բէգը լաւ թարգմանութիւն տուեց այդ երազին: Դեսպանն աւելի ևս ուրախացաւ և այլ ևս չշարունակեց տխուր մտածմունքով դառնացնել իր սիրտը:

Նա երազում տեսնում է որ, իբր թէ Միրզա Շէֆին մէջքի վրայ ընկած է, ոտները բարձրացած օդի մէջ և չորս ֆէրաշներ ճիպոտներով հարուածում են: Նա տեսնում է նոյնպէս որ, իբր թէ տիեզերքի ազաւէնը ոսկէ փլաւ է ուտում, փոխանակ ըրնձէ փլաւի, և դա արդէն նշան է, որ թշնամին շուտով կը տապալուի ինչ որ հէնց ինքն էր ցանկանում:

Նրա տրամադրութիւնն աւելի ևս լաւացաւ, երբ նրան այցելեց մի նշանաւոր ֆրանկ, որը, ինչպէս ինքը յայտնեց՝ այն մարդն էր, որին անգլիացւոց Շահը նշանակել էր դեսպանին ծառայելու որպէս մէհմանդար՝ ինչքան ժամանակ որ նա Անգլիայում մնալու լինէր: Նա շատ մաքուր և վարժ պարսկերէն էր խօսում, և մենք տեսանք, որ նրա պէս մի մէհմանդար ունենալով՝ մեր պատգամաւորութեան գործում ամեն բան աջող կը գնար:

Այդ անձնաւորութիւնը ոչ միայն պարսկերէն խօսել գիտէր, այլ շատ գեղեցիկ էլ գրում էր: Նա կարդացել էր մեր ամենալաւ հեղինակների գործերը: Հաֆէզն ու Սաադին նրա մատների ծայրին էին, և ճիշտն ասած՝ մենք շուտով տեսանք, որ դեսպանն աւելի երջանիկ կը լինէր, եթէ այդ մարդն այդքան գիտուն չլինէր, որովհետեւ յաճախ ամաչում էր նրա մօտ և պարտաւորում էր քամել տգիտութեան դառն բաժակը:

Մէհմանդարը դեսպանին յայտնեց, որ անգլիացւոց Շահի արտաքին գործերի նախարարը դիտաւորութիւն ունէր այդ օրը այցելել, և որ վէզիր է աազամն (Մեծ վէզիրը) էլ կայցելէր հետեւեալ օրը:

Այս լուրը չափազանց զարմացրեց մեզ:

— Ի՞նչ, բացազանչեցինք մենք, միթէ այս բոլոր այցելութիւնների գործը պիտի կարգադրուի առանց գոնէ մէկ անգամ բանակցութիւն ունենալու: Երեւի այս ողորմելի ֆրանկները շատ թեթեւ գաղափար ունին իրանց պատուարժանութեան մասին: Նրանք երեւի լաւ չեն հասկանում իրանց Շահի պատիւն ու արժանաւորութիւնը: Միթէ նրանք այսպէս շուտ, այսպէս իսկոյն ընդունում են այն՝ ինչ ընդհանրապէս մեր բանակցութիւնների գլխաւոր խնդիրներից մէկն է կազմում: Երբ անգլիական վերջին դեսպանը Թէհրան հասաւ, գրեթէ մի ամ-

բողջ ամիս տեւեց, մինչև որ որոշուեց թէ Ռվ պիտի լինէր առաջինը որ քայլ վերցնէր նամատի վրայից—Փրանկը թէ՛ իրանցին։ Եւ իսկապէս երկար ու ձանձրալի վիճաբանութիւնից յետոյ, հազիւ վերջապէս նրանք՝ Փրանկն ու իրանցին միմեանց հանդիպեցին, այն էլ մի երրորդ չէզոք անձնաւորութեան առնուած։ Սակայն այստեղ վէզիրները կարծես մեր բերաննհրն են ընկնում առանց պատճառելու մեզ նրանց (բերանները) բաց անելու նեղութիւնը։ Վերջ ի վերջոյ մենք եզրակացրինք, որ մենք պարսիկներ ենք և այդ արդէն նշանակում է ամեն բան։ Ո՞վ կարող է պնդել, որ պարսիկներին չէ նախապատուութիւնը։

Վէզիրն եկաւ նշանակուած ժամին։ Նրա հետ էին միայն երկու մարդ, որոնք համարձակ նստեցին նրա առջև, առանց նրանից թոյլտուութիւն խնդրելու։

—Փահ, ի՞նչ տարբերութիւն մեր Շահի վէզիրների և այս անձնաւորութեան մէջ, բացառանշեցինք մենք։

—Փահ, փահ, ասացի ես. վէզիրը մի մարդ է համարւում մեր օրհնեալ Իրանում։ Տեսէ՞ք մեր Շահի վէզրին այն ժամանակ՝ երբ նա դուրս է գալիս տնից, շրջապատուած հարիւրաւոր ծառաներով, որոնց մի քանիսը աչալըլութեամբ հսկում են, որպէսզի երբ նա իր գլուխն ամենաթեթեւ կերպով շարժի կամ յետ նայի, իսկոյն կարողանան իմանալ թէ նա ի՞նչ է հրամայում. ոմանք էլ վազում են նրա ասպանդախների կողքով, պատրաստ՝ համբուրուելու նրա ծնկները. ուրիշներն էլ հայցում են նրա քղանցքի պաշտպանութիւնը, ներկայացնելու նրան իրանց աղերսազիրը։ Յետոյ, եթէ մի խեղճ մարդ պատահմամբ խոչընդոտն է հանդիսանում նրա ճանապարհի վրայ, տեսէ՞ք Փէրաշներն ի՞նչպէս արիաբար ծեծում են նրան, տեսէ՞ք նրանք ի՞նչպէս են քշում, հեռացնում խեղճ մարդու ուղտերին կամ ջորիներին, և բեռներն ու ամեն բան գլորում, գցում առունների մէջ։

Մինչև հիմա, անդլիացի պաշտօնական անձանց վրայ մենք ոչինչ նշան չէինք կարողացել տեսնել, որից հասկանալինք թէ այս ինչ մարդը ի՞նչ պաշտօն ունի, և՛ թէ այս ինչ մարդը ինչի՞ է ցանկանում այս ինչ պաշտօնն ունենալ։ Ես, ահա, որքան զարմացանք, երբ մեզ յայտնուեց, որ դեսպանին այցելող այդ անգլիացին ոչ աւելի պակաս անձնաւորութիւն էր, քան այն մարդը, որ յաղթեց մեծահռչակ Տիպպու Սուլթանին և զրաւեց Մէրինգապատում փառաւոր քաղաքը։ Նա մի մարդ էր՝ որ աւելի հզօր էր քան բոլոր մոնղոլ պետերը միացած—մի մարդ՝ որ իր աչքը թարթելով կարող էր արեւին բարձրանալ տար և իր գլխի մի թեթեւ շարժումով ոչնչացնէր լուսնեակին։ Եւ այստեղ նա եկել էր, իր գլուխը ծածկուած սպիտակ

• փողով, նստած՝ փոխանակ դահի՝ մի հասարակ աթոռի վրայ, և առաջին անգամը այցելում էր մէկին՝ որը աւելի պակաս մարդ էր, քան մին՝ մեր Շահի կօշիկ կրողներէր. մինչդեռ ինքը մի ժամանակ իր իշխանութեան տակ ունեցել էր Շահեր ու Նաւաբներ, որոնք պատրաստ էին եղել համբուրելու իր կօշիկներէ փողին:

— Զարմանալի կեանքի փոփոխութիւններ, բացազանչեց Մոհամէդ բէգը: Մաադին ասում է թէ, ժմարդու կեանքը նման է խաֆ լեռներում ճանապարհորդող մարդուն, որը երբ սարի գագաթին է՝ բոլոր մահկանացուներից աւելի շուտ է ստանում արևի ճառագայթները. իսկ երբ կիսաճանապարհին է, այսինքն լանջի վրայ՝ նա մասամբ վարագուրւում է, և երբ ձորի տակն է հասնում, ամբողջ աշխարհը բարձրից է նայում նրա վրայ:

Նրա աչքերի վսեմ արտայայտութիւնից (մի արտայայտութիւն որ մեզ ստիպեց միշտ Պետութեան աչքը կոչել նրան) և նրա լեզուի ճարտարութիւնից պարզ էր, որ նա ոչ միայն զբաղեցրի որդի» էր, այլ և այնպիսի մէկը, որ կարող է երկրների վրայ իշխել: Իսկապէս մի մարդ էր, որ կարող էր ուղիղ ու սխալ բանի տարբերութիւնը հասկանալ թէ քրիստոնեաների և թէ հինդուների վրայ իշխելու ժամանակ:

Միբղա Ֆիրուզը անգլիացի վէզրին ցանկութիւն յայտնեց իսկոյն Ներկայանալ թագաւորին՝ մատուցանելու իրան յանձնուած նամակն ու ընծաները: Ասաց որ արքայից-արքան հրամայել էր իրան իր ժամանումից երեք օրից ոչ աւելի ուշ ներկայանալ և որ իր գլուխը կը կորցնէր, եթէ այդ հրամանը չկատարէր:

Վէզիրը հաւաստիացրեց նրան որ ամեն միջոց ձեռք կ'առնէր նրա ցանկութիւնը կատարելու, որքան, իհարկէ, անգլիական սովորութիւնները թոյլ կը տային. բայց աւելացրեց, որ իր տէր-թագաւորը միմիայն որոշ ժամանակներում է տեսնում, և հետևապէս ինքը կարծում էր, որ նրան ներկայանալը մի քիչ կարող էր ուշանալ:

Միբղա Ֆիրուզը, ինչպէս երևաց, զարմացաւ վէզրի այս խօսքի վրայ՝ և ասաց, որ Պարսկաստանի Շահը ամեն օր երևում է իր հպատակներին, որ միջօրէի աղօթքից առաջ՝ միշտ սէլամ է տեղի ունենում և Նորին Մեծութիւնը իր գահի վրայ նստելով՝ նրա առջև կանգնում են պալատական մեծ պաշտօնեաները, ինչպէս և այն անձինքը, որոնց պաշտօնը թոյլ է տալիս ներկայանալ, և որ մի դեսպան իր ժամանման հէնց առաջին օրը, եթէ կամենայ, կարող է ներկայանալ Շահին, միայն թէ, ի հարկէ, աստղերն ու աստղագէտները հաշտ լինին:

